8290

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող

Տիգրան Գաբրիելյան

«24» 07 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 197 - 25

Նախաձեռնող՝ «Հայր և որդի Հարությունյաններ» ՍՊԸ
ք.Երևան, Օհանով փ. 2/62

Գործունեությունը՝ Արթինլեռի օբսիդիանների հանքավայրի «ԱՊԱԳԱ» տեղամասի արդյունահանում
Արագածոտի մարզ

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 197 - 25

«24» հոկտեմբեր **2025թ.**

Արագածոտնի մարզի Արթինլեռի օբսիդիանների հանքավայրի «Ապագա» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆԵՐ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Արագածավան բնակավայր

Ներածական մաս. «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ն նախատեսում է օգտակար հանածոյի՝ օբսիդիանի արդյունահանում Արագածոտնի մարզի Արթինլեռի օբսիդիանների հանքավայրի «Ապագա» տեղամասում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «թ» ենթակետի՝ ներկայացված գործունեությունը դասվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակի:

Արդյունահանումը նախատեսվում է իրականացնել Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողամասում: Տեղամասի կենտրոնական հատվածի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնություն՝ 40°22'8.18", արևելյան երկայնություն՝ 43°46'6.28": Հողամասի մակերեսը կազմում է 2 հա: Արդյունահանվող օգտակար հանածոն՝ օբսիդիանը, նախատեսվում է կիրառել արհեստագործական և գեղազարդ իրերի արտադրության նպատակով: Մոտակա բնակավայրը Կանչն է՝ հայցվող տարածքից 3.5 կիլոմետր հեռավորության վրա: Հանքի հարակից տարածքով անցնում է ջրատար և գրունտային ճանապարհ: Կից հողամասերը համայնքային են:

Նկարագրական մաս. «Ապագա» տեղամասի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները բարենպաստ են բաց եղանակով օգտակար հանածոյի արդյունահանման համար: Աշխատանքները նախատեսվում է իրականացնել ընդլայնական ընթացաշերտով և միակողմ մշակման համակարգով՝ մեկ տեղամասում: Համաձայն երկրաբանական ուսումնասիրությունների Արթինլեռի օբսիդիանի

հանքավայրի «Ապագա» տեղամասի օբսիդիանները մատչելիության տեսանկյունից դասվում են II կարգի (միջին բարդության), իսկ գեղազարդ հատկություններով՝ I կարգի (բարձր գեղազարդության): Արդյունահանումը նախատեսվում է իրականացնել 20 տարվա ընթացքում: Մակաբացման ապարները հիմնականում ներկայացված են լճային, լճա-ալուվիալ, ալյուվիալ-պրոլուվիալ և դելուվյալ նստվածքներով՝ կավեր, կավավազներ, կոպճավազներ և այլն: Այդ ապարների հզորությունը կազմում է 0,2–0,5 մետր, իսկ ընդհանուր ծավալը՝ մոտ 13,200 մ^3: Մակաբացման ապարները նախատեսվում է հեռացնել էքսկավատորի և ինքնաթափի օգնությամբ, առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման: Կուտակումը նախատեսվում է կատարել տեղամասի արևմտյան հատվածում նախագծով նախատեսված լցակույտում:

Արդյունաբերական պաշարները կազմում են 124,9 հազ. տոննա (143.7 հազ. տ մարվող)՝ C1 կարգով: Կորզվող պաշարների ծավալը կազմում է 124,9 հազար տոննա օբսիդիան: Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում է 7,185 տոննա մարվող և 6,245 տոննա արդյունահանվող օբսիդիան: Արդյունահանված հումքը նախատեսվում է իրացնել տեղում՝ սպառողի ավտոտրանսպորտով: Արդյունահանման աշխատանքները նախատեսվում են կատարել էքսկավատորի միջոցով՝ առանց հորատապայթեցման: Արդյունահաման ընթացքում իրականացվելու է մշակված տարածքի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա:

Նախագծվող բացահանքի վերջնական եզրագծի ցուցանիշներն են.

- բացահանքի առավելագույն երկարությունը - 320.0 մետր,
- բացահանքի առավելագույն լայնությունը - 90.0 մետր,
- մշակվող օբսիդիանների հաստաշերտի միջին հզորությունը – 6.6 մետր,
- բացահանքի առավելագույն խորությունը - 65 մետր,
- բացահանքի օտարման մակերեսը – 2.0 հա,
- օբսիդիանի հաշվեկշռային պաշարները – 143.7 հազ. տ,
- օբսիդիանի կորզվող պաշարները – 124.9 հազ. տ,
- մակաբացման ապարների ծավալը բացահանքի վերջնական դիրքում – 13.2 հազ. մ^3:

Հայցվող տեղամասի կոորդինատներն են (ARMWGS-84 համակարգով)՝

1. 8395227.3322 4471316.9052
2. 8395229.5413 4471320.6254
3. 8395237.4838 4471326.4739
4. 8395246.0902 4471331.6328
5. 8395259.4656 4471338.2416
6. 8395280.9 4471345.8899
7. 8395294.2411 4471349.5285
8. 8395308.4341 4471351.3107
9. 8395317.5414 4471351.122
10. 8395333.01 4471350.1428
11. 8395348.997 4471348.4703
12. 8395354.1644 4471347.9297
13. 8395359.4186 4471347.735
14. 8395372.141 4471348.4266

15. 8395385.8636 4471349.8778
16. 8395399.6955 4471350.914
17. 8395418.0142 4471351.2186
18. 8395453.1055 4471351.5988
19. 8395473.6961 4471351.3242
20. 8395488.0567 4471350.7077
21. 8395494.0735 4471350.2889
22. 8395504.1606 4471348.9688
23. 8395521.8987 4471345.3132
24. 8395531.0123 4471342.1468
25. 8395537.3494 4471339.0106
26. 8395541.9064 4471335.8744
27. 8395543.566 4471333.2808
28. 8395543.566 4471330.326
29. 8395542.2992 4471327.1074
30. 8395537.4387 4471321.2676
31. 8395530.4391 4471315.3756
32. 8395520.8312 4471309.5082
33. 8395510.3014 4471303.7863
34. 8395494.0152 4471295.7635
35. 8395456.9475 4471275.8268
36. 8395440.6275 4471267.4476
37. 8395425.7794 4471261.7198
38. 8395419.7858 4471260.1732
39. 8395412.9287 4471259.5139
40. 8395399.9618 4471259.9189
41. 8395381.5402 4471261.4541
42. 8395365.9069 4471263.5787
43. 8395353.7026 4471266.1463
44. 8395343.9093 4471268.9122
45. 8395338.9365 4471270.3905
46. 8395322.4434 4471275.5788
47. 8395311.0975 4471279.1479
48. 8395293.8112 4471284.9301
49. 8395278.4 4471290.49
50. 8395273.7314 4471291.6813
51. 8395262.7634 4471294.4799
52. 8395253.5171 4471298.0902
53. 8395240.97 4471304.234
54. 8395234.6474 4471308.0489
55. 8395230.1061 4471311.3099
56. 8395227.944 4471313.5689
57. 8395227.1967 4471315.4547

Պատճառաբանական մաս. Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ, Օրենքով սահմանված կարգով պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժիններից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ: Ստացված կարծիքներն ամփոփվել են և փորձաքննական կենտրոնի դիտողությունների և առաջարկությունների հետ հաշվետվությունը ուղարկվել է լրամշակման:

Օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպվել և իրականացվել են հանրային լսումներ Արագածավան և Կանչ բնակավայրերում: Փորձաքննության գործընթացում Օրենքի 17-րդ հոդվածի 9-րդ մասի՝ հայցվող տեղամասում իրականացվել են տեղազննման աշխատանքներ և դիտարկումներ՝ տարածքի առկա վիճակի և ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության համապատասխանությունը պարզելու նպատակով: Տեղազննման ընթացքում պարզվել է, որ հանքի հարակից տարածքով անցնում է Արեգի ջրատարը (որն օգտագործվում է

ոռոգման նպատակով), սակայն ջրատարի վերաբերյալ տեղեկատվությունը չի ներկայացվել հաշվետվությունում և չի գնահատվել արդյունահանման աշխատանքների, ինչպես նաև բացահանքից արևմուտք նախատեսվող լցակույտի, արտադրական հրապարակի բացասական ազդեցությունները ջրատարի վրա, ինչպես նաև չի հստակեցվել հանքի սանիտարապաշտպանիչ գոտու և ջրատարի անօտարելի գոտիների համադրումները:

Պետական փորձաքննական եզրակացությունը կազմվել է հիմք ընդունելով հետևյալ փորձաքննական հիմնավորումները՝

1. Փորձաքննության ընթացքում լրամշակման փաթեթով նածեռնողին տեղեկացվել է, որ տարածքում հանդիպում են 6 Կարմիր գրքյան բուսատեսակներ, որոնց վերաբերյալ նախաձեռնողը ներկայացվել է մասնագիտական եզրակացություն, որում խոսվում է միայն 3 բուսատեսակների մասին, որոնք ըստ եզրակացության բացակայում են հայցվող տարածքում: Փորձաքննական կենտրոնի կողմից կատարված տեղազննման աշխատանքների ընթացքում, որին մասնակցել է նաև ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի գենետիկական ռեսուրսների պահպանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող, կ.գ.թ. Անուշ Ներսեսյանը, հանքի տարածքում հայտնաբերվել է Տուղտավարդ Սոֆիայի (Alcea sophiae) բուսատեսակը, որը գրանցված է բույսերի Կարմիր գրքում: Ընդերքի մասին օրենսգքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե հայցվող տեղամասում կան՝ կարմիր գրքում գրանցված բույսեր:
2. Համաձայն Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ նախաձեռնողը պարտավոր է ապահովել ներկայացվող նյութերի ամբողջականությունը, հավաստիրությունը և հիմնավորվածությունը, մինչդեռ տեղազննման արդյունքում պարզվել է, որ բացահանքի և լցակույտի տարածքներից արևմուտք գտնվում է Արեգի ոռոգման ջրատարը, որի մասին տեղեկատվությունը բացակայել է հաշվետվության մեջ և չի գնահատվել հանքարդյունաբերության, հումքի տեղափոխման ընթացքում ջրատարի վրա հնարավոր բացասական ազդեցությունները:
3. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի № 967-Ն որոշմամբ՝ «Մեծ Արտենի» էքստրուզիվ կոնը սահմանվել է որպես բնապատմական հուշարձան իր ամբողջ երկրաբանական կառուցվածքով և հնագիտական հուշարձաններով: Բնապատմական համալիր Մեծ Արտին լեռը գեոմորֆոլոգիական և երկրաբանական առումով ամբողջական հրաբխային կառուցվածք է, որը ներառում է ոչ միայն գագաթային հատվածում գտնվող էքստրուզիվ գմբեթը, այլ նաև նրա լանջերը, ստորոտը, լավայի հոսքերը, մոխրային շերտախմբերը և հրաբխային նստվածքներով ձևավորված շրջակա տարածքները, հրաբխային կոները կամ գմբեթները չպետք է մեկուսացնել միայն գագաթային հատվածով, քանի որ դրանց բնական կազմը

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

որոշվում է ամբողջ կառուցվածքային համալիրով: Բնապատմական հուշարձանը իր մեջ ներառում է նաև պատմական ամրոցից պահպանված հատվածներ և այլ հնագիտական հուշարձաններ, որոնք նույնպես փաստագրված են «Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն բնապատմական հուշարձանի կազմում:

Վերոնշյալ համատեքստում՝ համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենքի» 19-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետությունում բնության հուշարձանի տարածքում արգելվում է ցանկացած գործունեություն, որը սպառնում է դրա պահպանությանը: Միաժամանակ՝ Ընդերքի մասին օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե հայցվող տեղամասում կան՝ բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ: Հողային օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բնակավայրերի սահմանագծերում ընդգրկված հողերում ընդերքի ու բնական պաշարների օգտագործումը սահմանափակվում կամ արգելվում է, եթե նման գործողությունները կարող են վտանգ ստեղծել մարդկանց կյանքի ու առողջության համար և վնաս պատճառել շրջակա բնական միջավայրին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արագածոտնի մարզի Արթինլեռի օբսիդիանների հանքավայրի «Ապագա» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Սուսաննա Անտոնյան